ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում»

ՀԵՂԻՆԱԿ՝	Մելինե Մարտիրոսյան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝	Սյունիքի մարզ, ք.Կապանի թիվ 10 ՆՈՒՀ
ՄԵՆԹՈՐ՝	Ա.Դալլաքյան

ԵՐԵՎԱՆ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3
ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ..... 6
1.1. Նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր նկարագիրը, կարողունակություններն ըստ տարիքի 6
1.2. Ինտեգրված պարապմունքների հասկացությունը, կարևորությունը . 11
ԳԼՈՒԽ 2. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՐՈՂՈՒՆԱԿԱՀԵՆ ԿՐԹԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԻՄ ՓՈՐՁԻՑ 15
2.1. Ինտեգրված պարապմունքների կազմակերպման մոտեցումները..... 15
2.2. «Ձմեռային զվարճալիքներ» և «Ձնեմարդ» ինտեգրված պարապմունքները 16
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 24
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական թեմայի արդիականության հիմնավորում: Ժամանակակից հասարակության, գիտության, արտադրության և մարդկային հաղորդակցության մեջ տեղի ունեցող ինտեգրացիոն գործընթացները նոր պահանջներ են դնում նախադպրոցական ուսումնական հաստատությունների վրա: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում չափազանց նեղ շրջանակ է ստեղծվում կոնկրետ գիտակարգերի (օրինակ, մայրենիի և մաթեմատիկայի) ուսումնասիրության համար, իսկ վերջին ժամանակների հիմնական գիտական հայտնագործությունները կատարվել են սիներգետիկ[1] գիտակարգերի համատեքստում: Նախադպրոցական ուսումնական հաստատությունում աշխատող անձը, դաստիարակը պետք է պատրաստ լինի իր աշխատանքային գործընթացում ինտեգրել տարբեր առարկաներ և ստեղծել միջառարկայական կապեր: Այս առումով պետք է հետևողական լինել, որ դաստիարակն առաջին հերթին ինքը բավականին սահուն կերպով տիրապետի այն գիտելիքին, որը պատրաստվում է ներդնել աշխատանքային գործընթացում: Մասնավորապես, կարևոր է դաստիարակին պատրաստել այն բանին, որ վերջինս կարողանա իր գիտելիքներն ինտեգրել պարապմունքների շրջանակում: Ինտեգրված պարապմունքների համատեքստում միջառարկայական կապերի կառուցումը պետք է լինի համապարփակ՝ հիմնված ճշգրիտ մեթոդաբանական հիմքի վրա: Մասնավորապես, նախադպրոցական ուսումնական հաստատություններում ինտեգրված պարապմունքները պետք է անցկացվեն ոչ թե էպիզոդիկ, այլ համակարգված կերպով:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում նախապատվությունը տրվում է ինտեգրված պարապմունքների առավել հասանելի ձևին՝ պարզ ինտեգրացիային՝ մայրենի և մաթեմատիկա, մաթեմատիկա և նկարչություն, երբեմն ինտեգրվում են երեք գիտակարգեր՝ մայրենի, մաթեմատիկա, նկարչություն, բայց ոչ ավելին: Միևնույն ժամանակ, նշենք, որ ընդունելով ինտեգրված պարապմունքների անփոխարինելի կարևորությունը, պետք է փաստենք, որ պետական մակարդակով սահմանելով պահանջներ ոչ միայն նախադպրոցական կրթության վերջնարդյունքների, այլ նաև անձնական և միջառարկայական արդյունքների հասնելու վերաբերյալ, անկասկած, մեծանում է դաստիարակի ծանրաբեռնվածությունը: Թեմայի արդիականությունն առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ մեթոդական առաջարկությունների

[1] Սիներգիա ինչ որ արդյունք ստանալու համար իրար հետ գործակցող երկու կամ ավել իր կամ անձ, որ առանձին անհնար էր գեներացնել: Սիներգիա տերմինը ծագում է հունարեն synergia συνεργία synergos, συνεργός բառից, որ նշանակում է "աշխատել միասին":

անբավարարությունը, ինտեգրված պարապմունքների համատեքստում նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերաբերյալ պետական ծրագրերի համակարգման բացակայությունը դաստիարակին կանգնացնում է գործնական իրականացման խնդիրների առաջ: Այս խնդիրները ենթակա են պարտադիր լուծման, քանի որ բազմակողմ միջառարկայական կապերի միջոցով որակապես նոր մակարդակով լուծվում են ոչ միայն սաների զարգացման և դաստաիարակման խնդիրները, այլև նրանք պատրաստվում են դպրոցին և ունենում են զարգացած կարողություններ՝ բավականին արագ հարմարվելով դպրոցական միջավայրին:

Հետազոտության նպատակի և խնդիրների սահմանում: Հետազոտության հիմնական նպատակն է կատարել նախադպրոցական ուսումնական հաստատություններում ինտեգրված պարապմունքների կազմակերպման դիտարկումներ՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում՝ միտում ունենալով զարգացնել երեխայի կարողունակությունները ներգրավված բոլոր գիտակարգերի համատեքստում:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- մեկնաբանել նախադպրոցական տարիքին բնորոշ առանձնահատկությունները, տարիքից բխող կարողունակությունները,

- ուսումնասիրել նախադպրոցական ուսումնական հաստատություններում իտեգրված պարապմունքների, միջառարկայական կապերի հաստատումը, դրանց դերը,

- դիտարկել ինտեգրված պարապմունքների անցկացման կազմակերպման ընթացքը,

- ներկայացնել նախադպրոցական ուսումնական հաստատությունում իմ փորձը ինտերգրված պարապմունքների կազմակերպման առումով, որում կարևոր եմ համարել կարողունակահեն մոտեցման ներդրումը, երեխաների կարողունակությունների զարգացումը:

Հետազոտության օբյեկտի և առարկայի սահմանում: Ընդհանուր առմամբ հետազոտության օբյեկտը իրադարձությունների դրսևորումն է ինտեգրված պարապմունքների համատեքստում աշխատանքային գործընթացի կազմակերպման ընթացքում, իսկ առարկան՝ ինտեգրված պարապմունքների ապահոված արդյունքները Սյունիքի մարզի ք.Կապանի թիվ 10 նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախող երեխաների համար: Դրան հասնելու համար անցկացրել ենք 2 ինտեգրված պարապմունք՝ «Ջմեռային զվարճալիքներ», որի ժամանակ ինտեգրել ենք մայրենիի և մաթեմատիկայի պարապմունքները՝ նպատակ ունենալով հասնել խոսքի զարգացման, և

«Չնեմարդ» ապլիկացիա, որի ժամանակ ինտեգրել ենք մաթեմատիկայի, մայրենիի և նկարչության պարապմունքները:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, ընդհանուր մասից, որը բովանդակում է 2 գլուխ, որոնցից յուրաքանչյուրը բովանդակում է երկուական ենթահարց, եզրակացությունից և առաջարկությունների մասից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 25 համակարգչային էջ (ներառյալ տիտղոսաթերթը, բովանդակությունը և գրականության ցանկը):

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր նկարագիրը, կարողունակություններն ըստ տարիքի

Նախադպրոցական տարիքը երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման ինտենսիվ շրջանն է: Այն բնութագրվում է երեխայի զարգացման սոցիալական նոր իրադրության առաջացմամբ: Նախադպրոցական տարիքը մանկության երկրորդ շրջանն է, որը միջանկյալ դիրք է զբաղեցնում վաղ մանկության և կրտսեր դպրոցական տարիքի միջև: Ընդգրկում է անհատական զարգացման 3-ից 6-7 տարեկանը: Նախադպրոցական մանկության ընթացքում ինտենսիվորեն շարունակվում է երեխաների օրգանիզմի զարգացումը: Աստիճանաբար կատարելագործվում է շարժողական ապարատն ու սենսոմոտորային (զգայաշարժողական) ֆունկցիաները: Մեծանում է պայմանական կապերի ձևավորման արագությունը: Այս ամենը բնականաբար ուղեկցվում է հոգեկան բոլոր ֆունկցիաների և ամբողջության մեջ հոգեկան ողջ կառուցվածքի զարգացմամբ: Զգալիորեն ընդարձակվում են միջավայրի հետ շփման, հաղորդակցման փոխհարաբերությունների շրջանակները: Շարունակվում է խոսքային զարգացումը: Ինտենսիվորեն հարստանում է բառապաշարը հասնելով 3000 բառի: Տարիքային զարգացման այս շրջանում ձևավորվում է երեխայի դիտողականությունը:

Ընդարձակվում է աշխարհի մասին պատկերացումների շրջանակները: Կատարելագործվում է պատճառահետևանքային կապերի հասկացումը: Այս ամենը զուգակցվում է երեխայի զգայական զարգացման հետ, օպտիմալ պայմաններ ստեղծում մտածողության զարգացման համար: Նախադպրոցական մանկության վերջին էտապներում երեխան ընդունակ է դառնում պարզագույն տրամաբանական գործառնությունների իրականացմանը: Զարգացող տարածական պատկերացումները թույլ են տալիս երեխային տարբերակել աջ-ձախ (կողմերը), տարբերակում է ամբողջ-մաս, վերև-ներքև, մոտ-հեռու, առջևից-ետևից, բարձր-ցածր,նախորդ-հաջորդ և այլն հարաբերակցությունները[2]:

Նախադպրոցական տարիքը բնութագրվում է երեխայի զարգացման սոցիալական նոր իրադրության առաջացմամբ: Շրջապատող մարդկանց մեջ նախադպրոցականի գրաված տեղը էականորեն տարբերվում է այն տեղից, որը բնորոշ է վաղ մանկական

[2] Обухова Л.Ф. Возрастная психология. – М.: Россия, 2011, 414 с., с. 29., Обухова Л.Ф. Детская возрастная психология: Учебное пособие для вузов. - М.: Педагогическое общество России, 2000.-443 с., с. 57

տարիքի երեխայի համար: Հոգեկան զարգացման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է նրանով, թե ինչպիսին է եղել անցումը վաղ մանկությունից նախադպրոցական տարիքին: Հոգեկանի զարգացման գործընթացում հաջորդականության սկզբունքին համապատասխան վաղ մանկության ընթացքում նախապատրաստվում են որոշակի նախադրյալներ, որոնք հիմք են դառնում հաջորդ տարիքային շրջանում լիարժեք հոգեկան զարգացում ապահովելու համար: Երեխան վաղ մանկության շրջանում ձեռք է բերում մի շարք հոգեբանական նորագոյացություններ՝ խոսք, արտաքին աշխարհից եկող գրգռիչներին տարիքին համարժեք արձագանքելու ընդունակություն, սոցիալական միջավայրում որոշակիորեն կողմնորոշվելու կարողություն և այլն[3]:

3-5 տարեկանում երեխան տարրական պարտականություններ է ձեռք բերում: Նոր ձևեր է ստանում մեծերի հետ երեխայի ունեցած կապը: Համատեղ գործունեությունը հերթափոխվում է մեծահասակների ցուցումների ինքնուրույն կատարմամբ: Այս տարիքում առաջին անգամ հնարավոր է դառնում քիչ թե շատ հետևողականորեն և ըստ որոշակի ծրագրի երեխային գիտելիքներ սովորեցնելը: Սակայն, ինչպես ցույց է տվել Լ. Ս. Վիգոտսկին, այդ ծրագիրը կարող է իրագործվել միայն այն չափով, ինչ չափով այն երեխայի համար սեփական ծրագիր է դառնում: Երեխաների էական առանձնահատկություններից մեկը տարեկիցների հետ որոշակի փոխհարաբերություններ հաստատումը և «մանկական հասարակության» ստեղծումն է: Այլ մարդկանց նկատմամբ երեխայի սեփական ներքին դիրքորոշումը բնութագրվում է սեփական «ես»-ի և արարքների գիտակցվածության աճով, մեծերի կյանքի, գործունեության ու փոխհարաբերությունների նկատմամբ ցուցաբերվող հսկայական հետաքրքրությամբ:

Երեխաների գործունեության առաջատար տեսակը դառնում է խաղը: Խաղն առաջատար է դառնում ոչ այն պատճառով, որ ժամանակակից երեխան, որպես կանոն, իր ժամանակի մեծ մասը անց է կացնում խաղալով և համեմատաբար քիչ է ներգրավվում մեծահասակների աշխատանքային գործունեության մեջ: Այն երեխայի հոգեկանում որակական փոփոխություններ է առաջացնում: Խաղի մեջ երեխան զարգանում է որպես անձ, նրա մոտ զարգանում են հոգեբանական այն կողմերը, որոնցից էլ կախված է լինում երեխայի հետագա ուսման և աշխատանքային գործունեության ընդունակությունները, նրա շփումը մարդկանց հետ[4]:

---

[3] Տարիքային և մանկավարժական հոգեբանություն – Պրոֆ Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ – Ե. 1977, էջ 59-65:
[4] Андреева, А.Д. Современный дошкольник: возрастные нормы и жизненные реалии / А.Д. Андреева // Психолог в детском саду. – 2010. – № 2., с. 3-17

Հասարակության մեջ իրենց յուրահատուկ տեղը ունենալու հետևանքով երեխաները դերային խաղեր են խաղում, որոնք մեծահասակների կյանքին հաղորդակից լինելու յուրահատուկ ձևեր են: Բովանդակային խաղում դերի կատարման էությունը հենց խաղի մյուս մասնակիցների նկատմամբ այդ դերի կողմից պահանջվող պարտավորությունների կատարումն ու իրավունքների իրականացումն է: Որոշակի դերերի հետևողական կատարումը երեխաներին կարգապահ է դարձնում: Համատեղ գործունեության ընթացքում նրանք սովորում են համաձայնեցնել իրենց գործողությունները: Երեխաների խմբի մյուս անդամների հետ ունեցած այդ իրական փոխհարաբերությունները ոչ միայն կոլեկտիվիստի գծեր են ձևավորում, այլև զարգացնում են երեխայի ինքնագիտակցությունը: Հասակակիցների և նոր ստեղծվող կոլեկտիվի կարծիքը հաշվի առնելը երեխայի մեջ նրբազգացություն է ձևավորում սոցիալական երևույթների նկատմամբ, առաջ է բերում ինքնուրույնություն, խմբային պահանջներին հետևելու ընդունակություն, ապրումակցման կարողություն և այլն: Այս ամենը թույլ է տալիս ասել, որ խաղացող երեխաների խումբը սոցիալական հարաբերությունների յուրահատուկ դպրոց է, որտեղ մշտապես վարքի սոցիալական ձևեր են մոդելավորվում ու ամրապնդվում[5]:

Խաղի ընթացքում երեխան հեշտությամբ հասկանում է, որ իրական առարկան հնարավոր է փոխարինել խաղալիքով կամ որևիցե պատահական իրով: Նա ոչ միայն կարողանում է առարկաները փոխարինել միմյանցով, այլև առարկաները, կենդանիներն ու մարդկանց՝ իր անձով:

Կյանքի այս փուլում խաղը ըստ էության սիմվոլիկ (նշանային) բնույթ է ստանում: Սիմվոլիկ խաղը, ընդհանրապես երեխայի կողմից նշանների օգտագործումը, նրա հոգեկանի զարգացման գործընթացում էական նշանակություն ունի: Նշաններ օգտագործելու գործառույթի զարգացման շնորհիվ երեխան ձեռք է բերում ընկալածը դասակարգելու ընդունակություն:

Խաղային գործունեությունը նպաստում է կամածին ուշադրության և կամածին հիշողության զարգացմանը: Խաղի ընթացքում ավելի վաղ ու հեշտությամբ է դրսևորվում ուշադրությունը կենտրոնացնելու, մտապահելու և մտաբերելու գիտակցական նպատակը: Երբ երեխան չի ցանկանում ուշադրություն դարձնել այն ամենի վրա, որը կարևոր է խաղային իրադրության մեջ, եթե չի մտապահում խաղի պայմանները, ապա խաղընկերները պարզապես վտարում են նրան: Շփվելու և հուզական խրախուսանքի արժանանալու

[5] Տարիքային և մանկավարժական հոգեբանություն – Պրոֆ Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ – Ե. 1977, էջ 59-65:

պահանջմունքը երեխաներին ստիպում է նպատակասլաց կերպով կենտրոնացնել ուշադրությունը և մտապահել այն, ինչ անհրաժեշտ է:

Խաղի հետ միասին 3-5 տարեկան երեխաների հոգեկան զարգացման գործընթացում էական դեր է խաղում նաև արդյունարար գործունեությունը, նկարելը, ծեփակերտումը, ապլիկացիան, կառուցողական բնույթի ակտիվությունը: Սրանցից յուրաքանչյուրի համար բնորոշ է այնպիսի որոշակի արդյունքի (նկարի, կառույցի) ստացման միտումը, որը ունի որոշակի նախապես տրված հատկություններ: Երեխայից պահանջվում է ձեռք բերել անհրաժեշտ արդյունքը, նույնիսկ այն դեպքում, եթե բուն գործունեության գործընթացը տվյալ դեպքում նրան չի գրավում: Նա պետք է կարողանա մտահղացում ունենալ և հետևողականորեն իրագործել այն: Բնական է, որ 3 տարեկան երեխաները իրենց գործողությունները դեռևս ի վիճակի չեն ենթարկելու նման պահանջների: Առաջին շրջանում նրանց գրավում է ոչ այնքան արդյունքը, որքան բուն գործունեության գործընթացը՝ խորանարդիկներ շարելը, կավի ձևը փոխելը, մատիտ գործադրելիս թղթի վրա հետքի առաջացումը: Արդյունք ստանալու միտումը ձևավորվում է աստիճանաբար, գործունեությանը տիրապետելու ընթացքում:

Այդպիսի ուղղվածության ձևավորմանը զուգընթաց երեխան յուրացնում է անհրաժեշտ արտաքին և ներքին հոգեկան գործողություններ, նրանում գեղագիտական ապրումներ և ստեղծագործական ընդունակություններ են առաջանում:

Գիտնականները հատկապես մեծ ուշադրություն են դարձնում երեխաների նկարչական ակտիվության վրա: 3-5 տարեկան երեխաների նկարած պատկերները ունեն յուրահատկություններ. Դրանք սխեմատիկ են (մարդը պատկերվում է մի քանի գծերով), դրանցում հաճախ խախտված են լինում ըստ մեծության առարկաների ճիշտ հարաբերությունները (ծաղիկը կարող է տնից մեծ պատկերված լինել), տարածական հարաբերությունները: Երբեմն առարկան պատկերվում է միաժամանակ տարբեր կողմերից: Այդ առանձնահատկությունները որոշ չափով բացատրվում են նրանով, որ այդ նկարները հաճախ միայն խաղի կամ հետաքրքիր իրադարձությունների վերաբերյալ պատմությունների տարրեր են հանդիսանում: Այն, ինչ բացակայում է պատկերի մեջ, լրացվում է խոսքով կամ ժեստերով: Զգացվու�է նաև պատկերման այն եղանակների աղքատ լինելը, որոնց տիրապետում է երեխան: Բայց այդ պատկերներում դրսևորվում են նաև երեխայի ընկալման ու մտածողության որոշ բնորոշ գծեր: Այդ է վկայում այն փաստը, որ շատ դեպքերում երեխաները հեշտությամբ են ճանաչում հասակակիցների նկարած առարկաները, մինչդեռ մեծերը դժվարանում են: Արդեն նախադպրոցական տարիքում կարելի է հասնել առարկաների ճիշտ պատկերման, եթե երեխաներին ինչպես հարկն է

սովորեցնում են նկարել. պատկերվող առարկաները ուշադրությամբ ու հետևողականորեն ուսումնասիրելու և նրանցում բնորոշ կողմերը առանձնացնելու կարողություն են ձևավորում, երեխաներին զինում են տեխնիկական անհրաժեշտ հմտություններով: Այդպիսի ուսուցումը նպաստում է ակտիվ նպատակասլաց ընկալման և մտածական օպերացիաների զարգացմանը: Երեխան անհրաժեշտ «գործիքներ» է ձեռք բերում իր մտահղացումները մարմնավորելու համար: Սրա շնորհիվ զարգանում են նրա ստեղծագործական ընդունակությունները:

Պատկերման գործունեության զարգացման ընթացքում գույներից օգտվելու պահանջմունք է առաջանում: Սկսում են դրսևորվել գույների օգտագործման երկու տենդենցներ: Առաջինի դեպքում երեխան գույնը օգտագործում է ինքնակամ, այսինքն կարող է առարկան կամ նրա մասերը ներկել յուրաքանչյուր ներկով (մարդու մի ձեռքը՝ կարմիր, մյուսը՝կանաչ), հաճախ առարկային ոչ համապատասխան գույնով: Երկրորդի դեպքում երեխան ձգտում է պատկերող առարկան ներկել իր իրական գույնով: Սա բացատրվում է նրանով, որ հաճախ երեխաները առարկայի գույնը ներկում են մեծերի ասածով, այլ ոչ թե սեփական ընկալմամբ:

Երեխայի նկարների հատկանշական առանձնահատկությունն այն է, որ նրանցում երեխան արտահայտում է իր վերաբերմունքը պատկերին: Իրենց համար «գեղեցիկը» երեխաները պատկերում են վառ գույներով, իսկ «ոչ գեղեցիկը»՝ մուգ, գորշ գույներով: Գույնի օգտագործումը ներգործում է երեխայի ընկալման զարգացման և գեղագիտական զգացողության զարգացման վրա[6]:

2021թ-ին ՀՀ-ում հաստատվեց «Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը»: որով սահմանվում են երեխայի զարգացման, կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, երեխաների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և երեխաներին ներկայացվող որակական պահանջները: Նախադպրոցական կրթության չափորոշչի փոփոխությունը պայմանավորված է հանրակրթության պետական նոր չափորոշչի ընդունմամբ, որտեղ նախադպրոցական կրթությունը դիտարկվում է հանրակրթության նախնական աստիճան և նպատակ ունի ապահովել նախադպրոցական կրթության համակարգից երեխայի սահուն անցումը դեպի հանրակրթություն: Չափորոշչի հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումն է: Այն ներառում է, մասնավորապես, ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, կրթական ծրագրի

[6] Келли, К. Маленькие граждане большой страны / К. Келли //Новое литературное обозрение. – 2003. – № 60, с. 17-19.

բաղադրիչները և դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները, երեխաների ուսումնական, խաղային բեռնվածության առավելագույն չափը կամ դրանց հարաբերակցությունը, երեխաների զարգացման ընթացքի և առաջադիմության մակարդակի դիտարկման ձևերը[7]:

Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը և երեխաների կարիքներին ու հետաքրքրություններին արձագանքելու, յուրաքանչյուր երեխայի անձը հարգելու, համատեղ ուսումնառության գործընթացը խթանելու հնարավորություն է ընձեռում: Չափորոշչով սահմանված են երեխայի լեզվական և հաղորդակցական, ֆիզիկական կրթության, առողջ ապրելակերպի, ճանաչողական, սոցիալական, քաղաքացիական, թվային, մեդիա, մշակութային, մաթեմատիկական և տեխնիկական և այլ կարողունակությունները:

1.2. Ինտեգրված պարապմունքների հասկացությունը, կարևորությունը

Մանկավարժական գիտության մեջ ինտեգրված պարապմունքների մասին շատ է խոսվում ու ներկայացվում են բազմաթիվ գիտական աշխատություններ: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ինտերգրված պարապմունքների և դրանց շրջանակներում միջառարկայական կապերի ձևավորման խնդիրը բազմիցս բարձրաձայնվել է: Այս ուղղությամբ առաջին քայլը միջառարկայական կապերի հաստատման միջոցով նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողական գործունեության բարելավումն էր՝ երեխաների գիտակցության մեջ բնական աշխարհի միասնական պատկեր ստեղծելու վերջնարդյունքով: Ինտեգրված պարապմունքի գաղափարն առաջին անգամ կիրառել են Ուրալում՝ մակնավարժների մասնագիտական պրակտիկայում[8]: Այն լայն տարածում ստացավ, իսկ վերջին տասնամյակների ընթացքում գնալով ավելի ու ավելի համառ են փնտրվում տարբեր գիտակարգերի ինտեգրման հնարավորություններ, որը դիտվում է որպես միասնություն, տարբեր մասերի, տարրերի միավորում մեկ ամբողջության մեջ կամ կորցրած միասնության վերականգնում: Ցանկացած ինտեգրված մոդելի հիմնական տարբերակիչ բնութագրերն են համակարգվածությունը, բարդությունը, ամբողջականությունը, սինթեզը և ներդաշնակությունը:

[7] Հայաստանի Հանրապետության կառավարության 13 մայիսի 2021 թվականի n 744-ն որոշումը «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին», Հասանելիությունը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=152575 (Վերջին մուտքը՝ 15.12.2023, ժամը՝ 15:42)

[8] Дик Ю. И. Интеграция учебных предметов. / Ю. И. Дик. // Современная педагогика. - 2008. - № 9. - С. 42- 47.

Ինտեգրված պարապմունքները ապահովում են երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի զարգացումը: Ինտեգրված պարապմուքնները կարևորում ենգործունեության այն ձևերը որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնողականություն, համագործակցություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվողփոփոխությունների ճիշտ ընկալում: Ինտեգրված ուսուցումը ենթադրում է տարբեր մեթոդիկաների միջև կապերի ստեղծում, այսինքն, որևէ թեմաուսումնասիրելիս ամփոփվում են տարբեր մեթոդիկաներից հարցեր և երեխաները հասկանում են տարբեր մեթոդիկաների միջև գոյություն ունեցող կապերը: Երեխաների առաջարկվում են հետաքրքրիր թեմաներկենսական հարցերի շուրջ: Ուսումնասիրվող թեմայի մեջ երեխաների հետաքրքրություններին կենտրոնականտեղ հատկացնելով ապահովվում է երեխաների շահագրգռվածությունն ու հետաքրքրասիրությունը թեմայի նկատմամբ: Խաղի տարրը ինտեգրված դասի անբաժանելի մասն է :

Ինտեգրված դասի հիմնական խնդիրները

- երեխաների կողմից շրջապատող աշխարհի պատկերի ամբողջական ընկալման ձգտումը.
- նախադպրոցականների մոտ տեղեկատվության ինքնուրույն զարգացման և դրա օգտագործման հմտությունների ձևավորում

Դաստիարակը ինտեգրված պարապմունքին նախապատրաստվելիս հաշվի է առնում հետևյալը.

• թեման համապատասխանում է երեխաների հետաքրքրություններին,

• ընտրված թեման նպաստում է երևակայության և ստեղծագործական մտածողության խթանմանը,

• ընտրված թեման անհրաժեշտ է անցնել այնպես, որ ապահովվի բոլոր երեխաների մասնակցությունը,

• երեխաները հնարավորություն ունենան համագործակցելու և որոշակի պատասխասխանատվությունկրելու,

• երեխաները կարողանան ավելացնել իրենց գիտելիքներն ու փորձը՝ միջավայրի, առարկաների, մարդկանց և իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ[9]:

[9] Трубайчук, Л. В. Педагогическая стратегия и тактика организации интегрированного процесса в дошкольном образовании / Л. В. Трубайчук, С. В. Проняева. — М. : Книжная палата, 2013. — 173 с., с. 59.

Ինտեգրված պարապմունքների հենքը միջառարկայական կապերի հաստատումն է և գիտակարգերի «հոլիստիկ» ընկալումը: Ինտեգրված պարապմունքները երեխաներին սովորեցնում են բացահայտել, ուսումնասիրել աշխարհը և նրա բազմազան երևույթները և, որ ամենակարևորն է, կապ ստեղծել այդ ամենի միջև: Սա բացատրվում է նրանով, որ երբ նախադպրոցական կրթությունը կազմակերպվում է կապերի միջոցով, փոխկապակցվածությունը հնարավորություն է տալիս վեր հանել պատճառները, ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող[10]:

Ինտեգրված պարապմունքները կառուցվում են այնպես, որ մի ոլորտի գիտելիքները հիմնվում են մեկ այլ ոլորտից ձեռք բերված գիտելիքների վրա: Այս մոտեցումը ենթադրում է համալիր պլանավորում, գիտելիքների, փաստերի, գաղափարների ու երևույթների սահմանում և իմաստավորում տարբեր բնագավառներից, ինչպես նաև դրանց գնահատում, ինչը խթանիչ է երեխաների ճանաչողական և ստեղծագործական գործունեության համար: Այսպես, երեխայի մոտ զարգանում են ճանաչողական գործունեությունը և քննական մտածողությունը, ձևավորվում է ստեղծագործական միտքը, որի արդյունքում վերջինս կկարողանա տարբեր բնագավառների գիտելիքները համախմբել, ինտեգրել մեկ հարցի շուրջ ու լուծել այն: Այլ կերպ ասած, ինտեգրված պարապմունքը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթների ընկալմանը, գիտակցմանն ու ըմբռմանը:

Ինտեգրված պարապմունքի հիմնական նյութը դառնում է պարապմունքի համակարգային նշանակության բաղադրիչը: Համակարգային կարող է լինել ինտեգրված պարապմունքի միայն այն հատվածը, որը որոշում է դաստիարակի կողմից սահմանված առաջադրանքի նպատակը: Նման բաղադրիչներ են դառնում առանձին հասկացությունները, կանոնները, օրենքները, գաղափարները, մեթոդները կամ ուսումնառության միջոցները:

Կարիք ենք համարում նշել, որ անկախ նախադպրոցական տարիքի երեխաների համար կազմակերպվող ինտեգրված պարապմունքի առանձնահատկությունից, ձևավորվում են միջառարկայական կապեր: Միջառարկայական կապերը ծառայում են որպես դաստիարակության մատչելիության, գիտելիքների որակի բարձրացման անհրաժեշտ պայման: Մենք բոլորս տեսնում և ընկալում ենք առարկաները, երևույթները և շրջապատող աշխարհն առհասարակ յուրովի: Եվ թե քանի տեսանկյունից կկարողանանք ներկայացնել տվյալ երևույթը կամ առարկան կախված է ստեղծագործական մտքից: Իսկ ստեղծագործական միտքը պայմանավորված է միջառարկայական կապերով:

[10] Интеграция образовательных областей в педагогическом процессе ДОУ : пособие для педагогов дошкольных учреждений / Дыбина О. В. [и др.] ; под ред. О. В. Дыбиной. — М. : Мозаика-Синтез, 2012. — 80 с., с. 25.

Միջառարկայական կապերի դերն ու նշանակությունը նախադպրոցականների հետ աշխատանքում հետևյալներն են.

- Նպաստել և խրախուսել երեխաների կրթությունը համակողմանի կերպով, իրենց կյանքի ավելի մեծ փորձի հետ համատեղ:
- Ցույց տալ տարբեր առարկաների մեջ եղած նմանությունները և տարբեր մեթոդներով որոշակիացնել այդ կապերը:
- Ապահովել սովորողների համար ակտիվ և փորձառական դաստիարակության գործընթաց:
- Զարգացնել բովանդակալից համագործակցություն երեխաների և դաստիարակի միջև:
- Նպաստել երեխաների ճանաչողական, անհատական և սոցիալական զարգացմանը ինտեգրված ձևով:
- Դաստիարակներին հնարավորություն ընձեռել ներգրավել նորարական մեթոդներ իրենց աշխատանքային գործընթացներում:

Ամփոփելով կարելի է ասել, որ նախադպրոցական կրթության համատեքստում կարևոր տեղ պետք է հատկացնել ինտեգրված պարապմունքներին, որոնք դաստիարակության և երեխաներին դպրոցին նախապատրաստելու հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Այժմ, երբ մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաները լայնորեն կյանքի են մտնում, հրամայական պահանջ է դառնում նախադպրոցական կրթության նպատակ համարել բազմակողմանիորեն զարգացած երեխայի կերտումը, ինչը կենսագործվում է ինտեգրված պարապմունքների արդյունքում:

ԳԼՈՒԽ 2. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՐՈՂՈՒՆԱԿԱՀԵՆ ԿՐԹԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԻՄ ՓՈՐՁԻՑ

2.1. Ինտեգրված պարապմունքների կազմակերպման մոտեցումները

Ինտեգրված պարապմունքները ուսուցման կազմակերպման բավականին արդյունավետ ձևերից են, որոնք իրենց մեջ ներառում են երեխաների կողմից կատարվող՝ տարբեր գիտակարգերին վերաբերող տարբեր գործողություններ մեկ թեմայի շրջանակներում:

Ինտեգրված պարապմունքների ընթացքում երեխաները գտնվում են ակտիվ վիճակում և չեն ձանձրանում: Դաստիարակի կողմից աշխատանքի ճիշտ կազմակերպման դեպքում երեխաները ամբողջ պարապմունքի ընթացքում մեկ գործողությունից անցնում են մեկ այլ գործողության: Պայմանականորեն ինտեգրված պարապմունքը կարելի է բաժանել երեք մասի, որոնցից յուրաքանչյուրը լուծում է երեխաների զարգացման և դաստիարակության հետ կապված տարբեր խնդիրներ և որոնք էլ դաստիարակը հիմք է ընդունում ինտեգրված պարապմունքը կազմակերպելու համար:

Առաջին մասում դաստիարակը հստակեցնում և ընդհանրացնում է երեխաների կարողունակությունները: Ցանկալի է դիմել խաղային հնարների: Երկրորդ մասում երեխաները կարող են կատարել դիտումներ, հետազոտություններ, կամ այլ գործնական աշխատանքներ, որոնց արդյունքում նրանք կհանգեն ուսուցանող թեմայի վերաբերյալ որոշակի եզրակացության: Երրորդ մասում նախընտրելի է, որ երեխաները զբաղվեն կերպարվեստային աշխատանքով, որը կնպաստի նրանց ստեղծագործական կարողունակությունների և երևակայության զարգացմանը:

Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են ստեղծում բացահայտելու և զարգացնելու բարոյահոգեբանական հատկություններ՝ պատասխանատվություն, բարյացակամություն, ինքնուրույնություն:

Ինչպե՞ս անել, որ ինտեգրված պարապմունքը երեխաներին ոչ միայն հմտություններով և կարողունակություններով զինի, այլև նաև առաջացնի բուռն հետաքրքրություն ու ձևավորի ստեղծագործական մտածողություն: Ներքոհիշյալ խորհուրդները կարող են օգնել դաստիարակին՝ նախապատրաստելու այդպիսի պարապմունք:

- Որոշել և ձևակերպել պարապմունքի թեման:

- Հստակ ձևակերպել պարապմունքի նպատակային ուղղվածությունը. կոնկրետ ինչի՞ համար է պետք այդ պարապմունքը: Այդ առումով հարկավոր է հստակեցնել պարապմունքի ուսուցանող, դաստիարակող և զարգացնող գործառույթները:
- Մտածել նոր նյութի մատուցման համար հետաքրքրաշարժ մուտք: Այն պետք է առաջացնի երեխայի հետաքրքրությունը, զարմանքը և հիացմունքը:
- Նախապատրաստել դիդակտիկ նյութեր և ստեղծել համապատասխան միջավայր:
- Խմբավորել ընտրված ուսումնական նյութը: Մտածել, թե ինչ հաջորդականությամբ կտարվի աշխատանքն ուսումնական նյութի շուրջ, ինչպես կիրականացվի երեխաների գործողությունների հաջորդականությունը: Խիստ կարևոր է նյութը խմբավորելիս ընտրել պարապմունքի կազմակերպման այնպիսի ձև, որի ընթացքում երեխաները կցուցաբերեն ակտիվ գործունեություն:
- Պատրաստել պարապմունքի սեղմագիրը:

Պարապմունքի պլանավորման քայլերը

1. Ներկայացնել պարապմունքի թեման
2. Նպատակի ձևակերպում /այս բաժնում տրվում է ցանկալի արդյունքի սահմանումը/:
3. Անհրաժեշտ նյութերը
4. Պարապմունքի ընթացքը /ներկայացվում են աշխատանքի ընդունելի տարբերակներ, զանազան մեթոդների կիրառմամբ/
5. Ընկալման մակարդակի ստուգում /կատարվում է լուսաբանում՝ խաղի, գործնական աշխատանքի միջոցով/
6. Ամփոփում և եզրափակում

2.2. «Ձմեռային զվարճալիքներ» և «Ձնեմարդ» ինտեգրված պարապմունքները

Ինտեգրված պարապմունքների իրականացման համար հիմնաքարային ենք համարել վերը բերված մոտեցումները: «Ձմեռային զվարճալիքներ» և «Ձնեմարդ» ինտեգրված պարապմունքների անցկացման համար տարբեր օրերի ստեղծվել են համապատասխան մանկավարժական պայմաններ, իրականացվել է որոշակի մանկավարժական աշխատանք, որը նպաստել է առաջին դեպքում խոսքի զարգացմանը մաթեմատիկական գիտելիքների հետ ինտեգրման համատեքստում, երկրորդ դեպքում մաթեմատիկական գիտելիքների առավել խորը յուրացմանը՝ գեղարվեստական ապլիկացիայի պարապմունքի

միջոցով: Հետազոտական աշխատանքի իրականացման համար կիրառել եմ զննման, դիտման, զրույցի, ինչպես նաև ինտերակտիվ մեթոդներ՝ մտագրոհ, ենթախմբերի բաժանում, հարցեր հարցադրումներ:

Պարապմունքի պլանը «Ձմեռային զվարճալիքներ» պարապմունքի համար

Անհրաժեշտ նյութեր

- դաստիարակի կողմից նկարչական թղթերից (գունավոր և անգույն) նախապես պատրաստված երկրաչափական պատկերներ՝ շրջան, եռանկյուն, ուղղանկյուն, օվալ,
- սոսինձ, պատկերները փակցնելու համար անհրաժեշտ նկարչական թուղթ:

Պարապմունքի պլանը «Ձնեմարդ» պարապմունքի համար

Անհրաժեշտ նյութեր

- նկարչական թուղթ, փորձաթուղթ, դաստիարակի կողմից նկարչական թղթերից (գունավոր և անգույն) նախապես պատրաստված երկրաչափական պատկերներ՝ շրջան, եռանկյուն,
- բամբակ, սոսինձ, պատկերները փակցնելու համար անհրաժեշտ նկարչական թուղթ:

Պարապմունքի ընթացքը «Ձմեռային զվարճալիքներ» պարապմունքի համար

Ինտեգրված գիտակարգեր՝ մայրենի և մաթեմատիկա

Խթանման փուլ /3-5ր./

Երեխաները դաստիարակի օգնությամբ քննարկում են ձմեռային մի գեղեցիկ տեսարան, որտեղ կա ձնեմարդ, տոնածառ, ձյուն է տեղում:

Դաստիարակ- Մտովի պատկերացրե'ք և ասացե'ք՝ ի՞նչ տեսարան եք տեսնում:

Ի՞նչ հատկանիշներ ունեն այն ամենն, ինչը դուք մտովի պատկերացնում եք:

Ի՞նչ եք զգում տեսարանը պատկերացնելիս:

Իմաստի ընկալում

Դրանից հետո դաստիարակը երեխաներին հրավիրում է սեղանի մոտ, որտեղ նախապես դասավորել է այն երկրաչափական պատկերները, որոնք օգտագործվելու են: Նախ առաջարկում է ասել, թե ինչ երկրաչափական պատկերներ են դրանք, ապա ասել, թե որ պատկերների ստեղծման համար որ երկրաչափական պատկերների օգտագործումն է նպատակահարմար: Ապա առաջարկում է այդ պատկերներով գրատախտակին ամրացված թղթի վրա ստեղծել պատկերացրած տեսարանը: Դաստիարակը ուղղորդում է երեխաներին ամեն պատկերը փակցնելիս տալ դրա նկարագիրը, ասել, թե ինչ զգացողություններ ունի: Այսինքն, դաստիարակն ամեն կերպ միտում է երեխային արտահայտվել և, բացառելով քննադատությունը, դաստիարակը կարող է ընթացքում հմտորեն ուղղել երեխային:

Ստորև ներկայացնում եմ նկարներ, որոնք արվել են ինտեգրված պարապմունքի ընթացքում:



Կշռադատման փուլում պարզեցի թե ինչ զգացողություններ առաջացան երեխաների մեջ ձմեռային տեսարանը պատկերացնելիս, ստեղծելիս և ինչ նոր բան սովորեցին :

Պարապմունքի ընթացքը «Ձնեմարդ» պարապմունքի համար

Ինտեգրված գիտակարգեր՝ մայրենի, մաթեմատիկա, նկարչություն

Խթանման փուլ /3-5ր./

Երեխաները դաստիարակի օգնությամբ քննարկում են ձմեռային մի գեղեցիկ տեսարան, որը ստանալու են գեղարվեստական ապլիկացիայի միջոցով:

Դաստիարակ- Մտովի պատկերացրե'ք, որ դրսում արդեն ձյուն է տեղացել:

Ինչպիսի՞ն է շրջակա աշխարհ, ի՞նչ փոփոխություններ է իր հետ բերել ձյունը:

Ի՞նչ եք զգում տեսարանը պատկերացնելիս:

Իմաստի ընկալում

Դաստիարակը առաջարկում է ստանալ ձնեմարդու պատկեր և այն տեղայնացնել ձմեռային տեսարանում: Քանի որ ժամանակային սահմանափակվածությունը և երեխաների կարողունակությունները թույլ չէին տալիս մաթեմատիկական պատկերները ստանալ հենց պարապմունքի ընթացքում, դաստիարակը նախապես պատրաստել էր դրանք: Դաստիարակն առաջարկում է երեխաներին ցանկացած գործողություն կատարելիս խոսել դրանց մասին, ներկայացնել, թե ինչ երկրաչափական պատկերներով են ստանալու ձնեմարդու պատկերը և ձմեռային տեսարանը

Ստորև ներկայացնում եմ նկարներ, որոնք արվել են ինտեգրված պարապմունքի ընթացքում:

Կշռադատման փուլում պարզեցի թե ինչ զգացողություններ առաջացան երեխաների մեջ ձնեմարդու պատկերը և ձմեռային տեսարանը պատկերացնելիս, ստեղծելիս և ինչ նոր բան սովորեցին:

Այժմ սահմանենք, թե ինչ կարողունակություններ ձևավորվեցին երեխաների մոտ այս ինտեգրված պարապմունքների արդյունքում.

1) լեզվական և հաղորդակցական կարողունակություն՝

Երկու դեպքում էլ, իսկ «Ձմեռային զվարճալիքներ», ինտեգրված պարապմունքի դեպքում առավել ևս երեխաները տիրապետեցին գրական հայերենին, հաղորդակցվեցին տարբեր իրավիճակներում և միջավայրերում, դրսևորեցին խոսքային և ոչ խոսքային ակտիվություն: Ընդունակ եղան ճանաչել բանավոր ներկայացվող երևույթները, ըմբռնել, նկարագրել, մեկնաբանել դրանք, ներկայացնել բացատրություններ: Երեխաներն ունակ

եղան կողմնորոշվել լեզվական միավորներում՝ հնչյուն, բառ, նախադասություն, ունեցան տարրական պատկերացումներ վանկի, հնչյունի և տառի մասին, ինքնուրույն ձևակերպեցին սեփական մտքերը՝ ազատ և կապակցված արտահայտելով կարծիք, վերաբերմունք որևէ երևույթի մասին:

2) ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն՝

Երկու դեպքում էլ երեխաներն, իրենց տարիքին համապատասխան, ընդունակ եղան պատճառահետևանքային կապեր տեսնել բնության երևույթների, իրադարձությունների միջև, ճանաչել առարկաների և օբյեկտների կապերը, հարաբերությունները, նոր խնդիրներ լուծել: Դրսևորել է ակտիվություն, հետաքրքրասիրություն, ճանաչողական հետաքրքրություն աշխարհի, առարկաների և երևույթների, ինչպես նաև հարաբերությունների կառուցման հանդեպ: Երեխաները հաճույքով (ակտիվ) ներգրավվեցին բնության դրսևորումների նոր բացահայտումների մեջ.

3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն՝

Երեխաները հաղորդակցվեցին միմյանց հետ, տիրապետեցին փոխհարաբերություններում սահմանված վարքային կանոններին և դրսևորեցին սոցիալապես ընդունված նորմերին համապատասխան վարք: Շփման մեջ երեխաները դրսևորեցին նախաձեռնողականություն և կառուցողականություն, ընկերակցելու, համագործակցելու հմտություններ.

4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն՝

Երկու դեպքում էլ երեխաները հետևողական էին բարեվարքության կանոններին, միմյանց հետ հաղորդակցվում էին հարգանքով:

5) մշակութային կարողունակություն՝

Երկու դեպքում էլ երեխաները կարողացան գնահատել գեղեցիկը, ճանաչեցին և վերլուծեցին բնության երևույթները, ձմեռային իրականության ինքնատիպությունը: Երեխաները դրսևորեցին ընդգծված հետաքրքրություն գեղարվեստական գործունեության, կերպարվեստային գործունեության տարբեր տեսակների նկատմամբ, արտահայտեցին սեփական հույզերը, զգացմունքներն ու տպավորությունները:

6) մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն՝

Երկու դեպքում էլ ձևավորվեցին մաթեմատիկական կարողունակություններ: Երեխաները կարողացան կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ, համեմատում, հետազոտեցին առարկաները և երևույթները, կարողացան որոշել առարկաների քանակը, համեմատել դրանք ըստ մեծության, չափի, ձևի և գույնի, տարբերակել մասը և ամբողջը, երկրաչափական պատկերներն ըստ հատկանիշների:

7) տնտեսական կարողունակություն՝

Երկու ինտեգրված պարապմունքների արդյունքում էլ երեխաները սկսեցին հասկանալ շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականությունն ու փոխկապակցվածությունը: Ճանաչեցին բնության երևույթները, եղանակները:

8) ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն՝

Երեխաները պատկերացում կազմեցին ձմեռային մարզաձևերի և դրանց՝ մարդու մարմնի համար ունեցած առողջարար նշանակության վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ բոլորի մոտ ձևավորվեցին հետևյալ կարողունակությունները՝ ինքնուրույնություն, կարգապահություն, կամք, պատասխանատվություն, համագործակցություն, վճռականություն, փոխօգնություն, ընկերասիրություն, նախաձեռնողականություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով մեր կողմից կատարված տեսամեթոդական ուսումնասիրությունները և գործնական աշխատանքի արդյունքները՝ նշենք, որ՝

- Նախադպրոցականների զարգացմանը միտված ինտեգրված պարապմունքները պետք է կառուցված լինեն այնպես, որ երեխան դաստիարակի նվազագույն միջամտությամբ ձեռք բերի անհրաժեշտ կարողություններ և հմտություններ: Հարկավոր է ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ երեխան ոչ թե պարտադրաբար կրկնի որոշակի գործողություններ, այլ գիտակցաբար անի դրանք: Օրինակ, երբ անցկացնում ենք խոսքի զարգացման ինտեգրված պարապմունքներ, չպետք է ստիպենք երեխաներին կրկնել ասվածը կամ լսածը, այլ պետք է հասնենք նրան, որ երեխան մտածելով յուրովի արտաբերի իր նոր միտքը կամ նոր սովորած ոտանավորը:
- Ինտեգրված պարապմունքների ընթացքում հնարավոր բոլոր ձևերով պետք է խթանել երեխայի մտածողության ձևավորումը: Այդ առումով խիստ կարևոր է դաստիարակի դերը. առաջին հերթին նա պարտավոր է սատար լինել երեխաների սոցիալական գիտակցության ակտիվացմանը և նրբանկատորեն կարգավորել փոխօգնության, շրջապատի նկատմամբ ուշադիր լինելու կարողունակության ձևավորմանը խոչընդոտող խնդիրները:
- Դաստիարակության այս ոլորտում անպայման որպես չափանիշ պետք է վերցնել ոչ թե ցուցադրականորեն ընդգծված, շքեղ դիզայնով ու հագուկապով հանդեսները, այլ մանկապարտեզի առօրյա ինտեգրված պարապմունքները, որոնք ամբողջանում են մտածողությունն ու հմտությունները խթանող վարժություններով և խաղերով: Այս հարցում դաստիարակն ինքը պետք է լինի նախաձեռնող:
- Առաջարկում ենք մշակել մեթոդական ուղեցույցներ և, ինչու ոչ, նաև օրենսդրական կարգավորումներ նախադպրոցական ուսումնական հաստատություններում ինտեգրված պարապմունքների կազմակերպման առումով: Քանի որ այս համատեքստում բարձրանում է դաստիարակի ծանրաբեռնվածությունը, առաջարկում ենք հատուկ այդ պարապմունքների կազմակերպման համար առանձնացնել օգնականի հաստիք:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 13 մայիսի 2021 թվականի n 744-ն որոշումը «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին», Հասանելիությունը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=152575 (Վերջին մուտքը՝ 15.12.2023, ժամը՝ 15:42)
2. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն – Պրոֆ Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ – Ե. 1977.
3. Андреева, А.Д. Современный дошкольник: возрастные нормы и жизненные реалии / А.Д. Андреева // Психолог в детском саду. – 2010. – № 2., с. 3-17
4. Дик Ю. И. Интеграция учебных предметов. / Ю. И. Дик. // Современная педагогика. - 2008. - № 9. - С. 42- 47.
5. Интеграция образовательных областей в педагогическом процессе ДОУ : пособие для педагогов дошкольных учреждений / Дыбина О. В. [и др.] ; под ред. О. В. Дыбиной. — М. : Мозаика-Синтез, 2012. — 80 с., с. 25.
6. Келли, К. Маленькие граждане большой страны / К. Келли //Новое литературное обозрение. – 2003. – № 60, с. 17-19.
7. Трубайчук, Л. В. Педагогическая стратегия и тактика организации интегрированного процесса в дошкольном образовании / Л. В. Трубайчук, С. В. Проняева. — М. : Книжная палата, 2013. — 173 с., с. 59.
8. Обухова Л.Ф. Возрастная психология. – М.: Россия, 2011, 414 с.
9. Обухова Л.Ф. Детская возрастная психология: Учебное пособие для вузов. - М.: Педагогическое общество России, 2000.-443 с.